«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՍԹԵՄ ԴՊՐՈՑ»
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ N 1

Ք. ԵՐԵՎԱՆ 01.09.2025Թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՍԹԵՄ ԴՊՐՈՑ»
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԵՊՀ ՍԹԵՄ ԴՊՐՈՑԻ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝
31.08.2025Թ. Հ. 1 ՈՐՈՇՄԱՆ
ԵՊՀ ՍԹԵՄ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԹԵՄ ԴՊՐՈՑԻ
ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կարգապահական կանոնները (այսուհետ՝ Կանոններ) կարգավորում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ՍԹԵՄ դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) և Դպրոցի վարչական, ուսումնաօժանդակ աշխատողների, ուսուցիչ-ների, մանկավարժների, դասավանդողների , խմբակների ղեկավարների (այսուհետ՝ Աշխա-

տող) և Դպրոցում մատուցվող կրթական ծառայություններից (անվճար և վճարովի) օգտվող սովորողների (այսուհետ՝ Սովորող), սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների, այսուհետ՝ Ծնող) միջև Կանոններով սահմանված իրավահարաբերությունները, ինչպես նաև Սովորողների ուսումնառության գործընթացների ռեժիմը սահմանող կարգապահական պատասխանատվության, խրախուսանքի միջոցների կիրառման նորմերը:

Սույն Կանոններում կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

- ✓ Աշխատող(ներ)՝ աշխատանքային պայմանագրով և/կամ անհատական իրավական ակտով աշխատանքի ընդունված դպրոցի գործադիր մարմինը (այսուհետ՝ Տնօրեն), հաստիքային և ժամավճարային և/կամ այլ հիմքով ընդունված աշխատողները (այսուհետ՝ Կողմեր), որոնց պարտականությունները և իրավունքները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ներքին կարգապահական կանոններով, սույն Կանոններով և այլ իրավական ակտերով.
- ✓ Ուսումնական տարածք՝ դպրոցի կրթական գործընթացն իրականացնելու համար հատկացված շենքերը, շինություններ, ուսումնական տարածքները, դասարանները, կաբինետները, լաբորատորիաները, ֆիզկուլտուրայի դահլիճները և այլն (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1),
- ✓ Սովորողներ՝ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան կրթություն ստանալու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դպրոց ընդունված անձինք,
- ✓ Տնօրեն՝ Դպրոցում ուսումնական գործընթացը կազմակերպող և ղեկավարող գործադիր մարմին,
- ✓ Ծնող(ներ)՝ սովորողների ծնողներ/օրինական ներկայացուցիչներ:

Կանոններով սահմանված դրույթները պարտադիր են Կողմերի համար:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1–ից,

2.2. ուսումնական տարին բաղկացած է ուսումնական շաբաթներից, քննաշրջաններից և արձակուրդներից,

2.3. դպրոցի գործունեության նպատակը օրենքով սահմանված կարգով վճարովի կրթական ծառայություններ մատուցելն է,

2.4. ուսումնադաստիարակչական գործընթացը իրականացվում է Դպրոցում հանրակրթական պետական չափորոշիչներով սահմանված հեղինակային և պետական ուսումնական առարկայական ծրագրերին համապատասխան ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված դասագրքերով, Դպրոցի մասնագիտական խմբերի (առարկայական մեթոդական միավորումների) կողմից մշակված և դպրոցի մանկավարժական խորհրդի հավանությանն արժանացած ուսումնական նյութերով և ձեռնարկներով, ինչպես նաև՝ ուսումնաօժանդակ համապատասխան պարագաներով և այլ նյութերով,

2.5. Դպրոցի տարածքում (այդ թվում՝ դասարաններում, լսարաններում, կաբինետներում և այլուր) առկա են տեսահսկման և տեսաձայնագրման սարքեր:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերի իրավունքները և պարտականությունները սահմանվում են ԵՊՀ ներքին կարգապահական կանոններով, Դպրոցի կանոնադրությամբ, սույն Կանոններով, ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով:

3.1. Ուսումնական գործընթացում կարգապահություն ապահովելու համար Տնօրենը պարտավոր է՝

3.1.1. նոր ընդունվող Սովորողին և Ծնողին ծանոթացնել սույն Կանոններին, ուսումնական գործընթացի պայմաններին,

3.1.2. օժանդակել Սովորողին՝ իրացնելու օրենքով ամրագրված կրթական իրավունքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, միաժամանակ ապահովել առարկայական չափորոշիչներով պահանջվող գիտելիքների, կարողությունների որակական մակարդակը,

3.1.3. անհրաժեշտ պայմաններ ստեղծել Սովորողի և Աշխատողների փոխհամագործակցության մակարդակի բարձրացման, ինչպես նաև՝ ուսումնական գործընթացում առաջավոր մեթոդների ներդրման համար,

3.1.4. Դպրոցում ձևավորել բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտ՝ Սովորողին և Ծնողին մասնակից դարձնելով ուսումնական, դաստիարակչական և այլ աշխատանքներին,

3.1.5. Սովորողին չտալ ՀՀ օրենսդրության շրջանակներից դուրս հանձնարարականներ, իսկ անհրաժեշտությամբ պայմանավորված չնախատեսված այլ դեպքերում հաշվի առնել Սովորողի առողջական վիճակը, տարիքային և ֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկությունները,

3.1.6. հարգանքով վերաբերվել Սովորողի իրավունքներին ու ազատություններին, ուսումնառության ընթացքում միաժամանակ կիրառել ժողովրդավարական սկզբունքներ,

3.1.7. իրագործել ՀՀ օրենսդրությունից բխող անհրաժեշտ այլ պարտավորություններ, որոնք համապատասխանում են Դպրոցի առանձնահատկություններին և շահերին:

3.2. Տնօրենն իրավունք ունի՝

3.2.1. սահմանելու ուսումնադաստիարակչական գործընթացն իրականացնելու աշխատակարգ,

3.2.2. 10-12-րդ դասարաններում սահմանելու կիսամյակային, փոխադրական և ավարտական քննություններ,

3.2.3. վերահսկելու ուսումնական գործընթացը, ինչպես նաև՝ հանձնարարված աշխատանքների կատարման որակական ցուցանիշները,

3.2.4. Սովորողի նկատմամբ կիրառելու խրախուսման միջոցներ, նշանակելու կարգապահական տույժեր, այդ թվում՝ դպրոցից հեռացում,

3.2.5. Սովորողի կողմից Դպրոցին նյութական վնաս պատճառելու դեպքում Ծնողից պահանջելու վնասի լրիվ կամ մասնակի փոխհատուցում,

3.2.6. ՀՀ օրենսդրությանը համապատասխան, Դպրոցի առանձնահատկություններից և շահերից ելնելով՝ կիրառելու այլ իրավունքներ:

3.3. Սովորողը պարտավոր է՝

3.3.1. մասնակցել Դպրոցի կողմից կազմակերպվող միջոցառումներին և այլ աշխատանքներին,

3.3.2. բարեխղճորեն սովորել, ձեռք բերել ու ստանալ առարկայական պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, տիրապետել հմտությունների և կարողությունների բավարար պաշարի՝ ուսումնառության ընթացքում ներկայացվող պահանջները բավարարելու համար,

3.3.3. խնամքով վերաբերվել Դպրոցի գույքին, հարգել Դպրոցի սովորողների, Աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, ինչպես նաև ժամանակին և պատշաճ կատարել դասավանդողների կողմից հանձնարարված ուսումնական առաջադրանքները,

3.3.4. հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին՝ Դպրոցի կողմից սահմանված ժամանակացույցի համաձայն՝ ուսումնական միջավայրին համապատասխան արտաքին տեսքով (արգելվում են չափազանց կարճ, թափանցիկ, բացվածքով, պատռվածքներով, սադրիչ կամ վիրավորական բովանդակությամբ տպագրությամբ հագուստների կրումը, վառ կոսմետիկայի օգտագործումը, արտահայտիչ սանրվածքը, դաջվածքները, տղաների դեպքում նաև՝ կիսատաբատով (բացառությամբ ֆիզկուլտուրայի դասաժամին) և չսափրված դպրոց հաճախելը),

3.3.5. կատարել ՀՀ օրենսդրությամբ, Կանոններով, Դպրոցի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

3.4. Սովորողն իրավունք ունի՝

3.4.1. ստանալու հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան կրթություն,

3.4.2. օրենքով սահմանված կարգով փնտրելու և ստանալու անհրաժեշտ ուսումնական գիտակրթական տեղեկատվություն, ինչպես նաև ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները,

3.4.3. անվճար օգտվելու Դպրոցի ուսումնանյութական բազայից՝ համաձայն Աշխատողների կողմից ներկայացված առաջադրանքների,

3.4.4. մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին,

3.4.5. պաշտպանվելու իր պատիվն ու արժանապատվությունը վնասող ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, Դպրոցի աշխատողների և սովորողների ոչ իրավաչափ գործողություններից,

3.4.6. օգտվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

4. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

4.1. Դպրոցի Աշխատողը պարտավոր է պահպանել վարքագծի հետևյալ կանոնները՝

4.1.1. Սովորողի և Ծնողի հետ շփումներում լինել օրինապահ, շրջահայաց, արդարամիտ և օրինակելի՝ բացառելով ցանկացած անձնական շփում,

4.1.2. Սովորողի և Ծնողի հետ շփումներում չնսեմացնել Դպրոցի հեղինակության նկատմամբ ձևավորված հարգանքն ու վստահությունը,

4.1.3. հարգել և ըստ անհրաժեշտության գնահատել Սովորողի կարծիքը, նրան առնչվող գործառույթներում հաշվի առնել նրա դիրքորոշումը, միաժամանակ գնահատել նրա դերն ու նշանակությունը Դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում,

4.1.4. Սովորողի վերաբերյալ քննադատությունը արտահայտել միայն այն դեպքերում, եթե դա վերաբերում է ուսումնական գործընթացին և չի վիրավորում նրա արժանապատվությունը,

4.1.5. Աշխատողն իրավունք չունի արտադասարանական վճարովի պարապմունքներ իրականացնել դպրոցի սովորողների հետ,

4.1.6. Աշխատողը պարտավոր է պահպանել բարոյական նորմերով սահմանված այլ կանոններ:

4.2. Սովորողը պարտավոր է պահպանել վարքագծի հետևյալ կանոնները՝

4.2.1. ուսումնական գործընթացում Աշխատողների հետ փոխհարաբերություններ հաստատել բացառապես գիտելիքների, հմտությունների, կարողությունների զարգացման համար,

4.2.2. Աշխատողների, Ծնողների և մյուս սովորողների հետ շփումներում և ուսումնական գործընթացում լինել, օրինապահ, շրջահայաց, արդարամիտ, օրինակելի, պարկեշտ, հարգալից,

4.2.3. Աշխատողների և մյուս սովորողների հետ շփումներում չնսեմացնել Դպրոցի հեղինակությունը և բարի համբավը,

4.2.4. հարգել և ըստ անհրաժեշտության գնահատել Աշխատողի կարծիքը, ուսումնադաստիարակչական աշխատանքներում հաշվի առնել նրա հեղինակությունը, փորձառությունը, միաժամանակ գնահատել նրա դերն ու նշանակությունը Դպրոցի կրթադաստիարակչական գործընթացներում,

4.2.5. ընկերների վերաբերյալ քննադատությունն արտահայտել միայն նրանց ներկայությամբ,

4.2.6. ուսումնառության ընթացքում պահպանել բարոյական նորմերով սահմանված այլ չափանիշներ:

4.3. Ուսումնական տարածքում վարքագծի անթույլատրելի դրսևորումները.

<u>ուսումնական տարածքում արգելվում են՝</u>

4.3.1. մոլախաղերը,

4.3.2. գլխարկով և վերարկուով (կամ այլ վերնահագուստ) ուսումնական պարապմունքներին մասնակցելը,

4.3.3. ծխելը (այդ թվում՝ էլեկտրոնային ծխախոտ), ալկոհոլ և հոգեներգործուն նյութեր օգտագործելը, պահելը և տարածելը,

4.3.4. Էներգետիկ ըմպելիքներ օգտագործելը, սուլելը,

4.3.5. ուսումնական պարապմունքների ընթացքում մաստակ ծամելը, բջջային հեռախոսից կամ տեխնիկական այլ միջոցներից օգտվելը՝ բացառությամբ Աշխատողների թույլտվության (դասապրոցեսը սկսվելուց առաջ Սովորողը պարտավոր է անջատել բջջային հեռախոսը և դնել պահարանում կամ պայուսակում: Դասի ընթացքում բջջային հեռախոս կամ տեխնիկական այլ միջոց առաջին անգամ օգտագործելու դեպքում այն կհանձնվի տնօրենությանը, իսկ կրկնվելու դեպքում Սովորողը կենթարկվի կարգապահական տույժի),

4.3.6. այլ անձանց նկարահանելը կամ ձայնագրելը՝ առանց նրանց համաձայնության,

4.3.7. վեճեր հրահրելը կամ դրանց մասնակցելը,

4.3.8. անհարգալից վերաբերմունք դրսևորելը գործընկերների, դասընկերների կամ Դպրոցի աշխատակիցների նկատմամբ և այլն,

4.3.9. վիրավորական, գռեհիկ, նվաստացնող կամ սպառնալից բառեր օգտագործելը,

4.3.10. ռոմանտիկ հարաբերությունների դրսևորումը (գրկախառնություններ, համբույրներ և այլն),

4.3.11. սոցիալական մեդիայի միջոցով համադասարանցիների, դպրոցի կամ Աշխատողների մասին տեղեկատվության հրապարակումը՝ առանց տվյալ անձանց թույլտվության,

4.3.12. շահադիտական կամ այլ բնույթի անօրինական պահանջ ներկայացնել Աշխատողների և/կամ սովորողների նկատմամբ,

4.3.13. ուսումնառության ընթացքում առանց Դպրոցի տնօրենությանը, Ծնողին տեղյակ պահելու ուսումնադաստիարակչական գործընթացը խանգարող այլ անձանց հետ որևէ գործունեություն ծավալելը,

4.3.14. առանց Դպրոցի տնօրենության թույլտվության՝ Դպրոցի նյութատեխնիկական միջոցները օգտագործելը, դասերի ավարտից հետո կամ ոչ աշխատանքային օրերին դպրոցի տարածքում գտնվելը,

4.3.15. ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլոց ազատությունները և իրավունքները խախտելը:

5. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԸ

5.1. Դպրոցի Սովորողները խրախուսվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Սովորողի նկատմամբ կարգապահական տույժերը կիրառվում են Տնօրենի հրամանով:

5.2. Ուսումնառության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև իր իրավունքները վերազանցելու, սույն Կանոնները խախտելու դեպքերում Սովորողը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

5.3. Դպրոցի Սովորողի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են Տնօրենի հրամանով, իսկ դպրոցից հեռացումը՝ ԵՊՀ ռեկտորի (տնօրենի ներկայացմամբ):

5.4. Կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝

1) բանավոր դիտողություն,
2) նկատողություն,
3) խիստ նկատողություն,
4) պայմանագրի միակողմանի լուծում:

5.5. Մինչև Սովորողի նկատմամբ կարգապահական տույժի կիրառումը անհրաժեշտ է նրանից պահանջել խախտման մասին բանավոր կամ գրավոր բացատրություն: Եթե Սովորողը չի ներկայացնում բացատրություն, ապա Ծնողին իրազեկելուց հետո կիրառվում է կարգապահական տույժ:

5.6. Կարգապահական տույժ կիրառելը Սովորողին կամ Ծնողին չի ազատում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության մյուս տեսակներից:

5.7. Կարգապահական տույժը Տնօրենի հրամանով կարող է համարվել մարված կամ հանված, եթե Սովորողն իրեն դրսևորել է օրինապահ և կարգապահական տույժ նշանակելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական խախտում թույլ չի տվել:

5.8. Սովորողի կողմից հաճախակի թույլ տված կարգապահական խախտումները (երկու և ավելի), որոշ դեպքերում նաև՝ մեկ խախտումը (կապված խախտման բնույթից) կարող են հիմք հանդիսանալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նրա նկատմամբ կիրառելու այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու պահանջ, որը Ծնողի կողմից ենթակա է պարտադիր կատարման: Եթե Սովորողը (կամ նրա Ծնողը) չի պահպանել պայմանագրային

դրույթները, և/կամ Սովորողը չի ապահովել կրթության բովանդակությանն ու ծավալի յուրացմանը ներկայացվող նվազագույն պահանջները, ապա Դպրոցը կարող է միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տասն օր առաջ տեղյակ պահելով Ծնողին: